Հաշվետվություն

2018թ. առաջին կիսամյակում ՀՀ կրթության տեսչական մարմնում ստացված դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքների մասին

ՀՀ կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ ԿՏՄ) 2018թ. առաջին կիսամյակում ստացել է թվով 132 դիմում-բողոքներ (ներառյալ թեժ գիծը): ՀՀ կրթության պետական տեսչության նախորդ տարիների նույն ժամանակահատվածում ստացված դիմում-բողոքների վիճակագրությունն այսպիսին է. 2017թ.՝80, 2016թ.՝18, 2015՝ 11, 2014թ.՝ 14 դիմումներ:





2018թ. թվով 132 դիմում-բողոքներից 2-ը վերահասցեագրվել է ԿՏՄ ՀՀ վարչապետից, 2-ը՝ ՀՀ կառավարությունից, 55-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարից, 52-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունից (որից 39-ը ստացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Թեժ գիծ»

հեռախոսակապով), 10-ը՝ ԿՏՄ խորհրդի անդամ Անահիտ Բախշյանից: Անմիջապես ԿՏՄ-ում ստացվել են թվով 8 դիմում բողոքներ (որոնցից 3-ը ԿՏՄ «Թեժ գիծ» հեռախոսակապով): Անդրադարձ է արվել նաև ԶԼՄ-ների թվով 3 հրապարակումներով բարձրացված հարցերին:



Ստացված թվով 132 դիմում-բողոքներից 128-ը ուսումնական հաստատությունների վերաբերյալ են, 4-ը՝ ընդհանուր բնույթի: Ուսումնական հաստատությունների վերաբերյալ դիմում-բողոքներից 8-ը՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններից (ՆՈՒՀ) են, 7-ը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից, 113-ը՝ դպրոցներից:



Դիմում-բողոքների թիվն ըստ մարզերի, ուսումնական հաստատությունների ներկայացվում են ստորև բերված աղյուսակում.

ՀՀ մարզեր, Երևան քաղաք	Դիմումների ընդհանուր թիվը (ներառյալ «Թեժ գիծը»)	Դիմումների թիվն ըստ Ուսումնական հաստատությունների
Երևան	57	հ. 11 հ/դ, Երաժշտական հ. 13 հատուկ դպրոց (2), Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց, հ. 14 հ/դ, հ. 19 հ/դ, հ. 24 հ/դ, հ. 35 հ/դ, հ. 48 հ/դ (4), 51 հ/դ, հ. 55 հ/դ (4), հ. 59 հ/դ, հ. 68 հ/դ, հ. 71 հ/դ, հ. 74 հ/դ, հ. 77 հ/դ, հ. 85 հ/դ, 89 հ/դ, հ. 101 մ/դ, հ. 103 ա/դ, հ. 104 հ/դ, 116 հ/դ (2), հ. 119 ա/դ, հ. 122 հ/դ, հ. 123 հ/դ, հ. 130 հ/դ, հ. 131 հ/դ, հ. 132 հ/դ, հ. 137 հ/դ, հ. 139 ա/դ, հ. 141 հ/դ, հ. 155 հ/դ, հ. 164 հ/դ, հ. 166 հ/դ, հ. 170 ա/դ, հ. 175 մ/դ, հ. 181 հ/դ, հ. 187 մ/դ, հ. 189 ա/դ, հ. 196 հ/դ, թիվ 80 ՆՈՒՀ, թիվ 92 ՆՈՒՀ, թիվ 114 ՆՈՒՀ, թիվ 120 ՆՈՒՀ, թիվ 141 ՆՈՒՀ, Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային հ.2 պետական քոլեջ, քաղաքացի (ռուսական դասարաններ ընդունվելու մասին), ՀՀ ԿԳՆ ԿՊՏ նախկին աշխատակիցներ, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ, Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ
Արարատ	12	Արտաշատի հ. 1 հ/դ (2), Արտաշատի հ. 2 հ/դ, Արտաշատի հ. 4 հ/դ, Բյուրավանի մ/դ, Դալարի մ/դ (2), Դվինի մ/դ, Եղեգնավանի մ/դ, Սիսավանի մ/դ, Վեդիի հ. 1 հ/դ, Նշավանի մ/դ
Տավուշ	8	Աչաջրի մ/դ, Վերին Կարմիրաղբյուրի մ/դ (2), Զորական գյուղի մ/դ (2), Ոսկևանի մանկապարտեզ, Դիլիջանի պետական քոլեջ, Նոյեմբերյանի պետական քոլեջ
Կոտայք	6	Հրազդանի հ. 9 հ/դ, Վերին Պտղնիի մ/դ, Եղվարդի հ. 3 հ/դ, Եղվարդի հ. 2 հ/դ, Հրազդանի հ. 12 հ/դ, քաղաքացի գյուղ Քասախ
Լոռի	7	Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն, Անտառամուտի մ/դ, Վանաձորի հ. 4 հ/դ (3), Տաշիրի Պրիվոլնոյե մ/դ, Դսեղ գյուղի մանակապարտեզ
Արմավիր	9	Արգավանդի մ/դ, Արմավիրի հ. 8 հ/դ, Արմավիրի հ. 10 հ/դ, Դողսի մ/դ, Լուկաշինի մ/դ, Վաղարշապատի հ. 2 ա/դ, Վաղարշապատի հ. 8 հ/դ, Շահումյանի մ/դ, Մեծամորի հ. 1 հ/դ
Գեղարքունիք	10	Սևանի հ. 2 հ/դ, Վարդենիսի հ. 3 հ/դ, Արծվանիստի մ/դ, Սևանի հ. 5 (3) հ/դ, Սևանի հ. 1 հ/դ, Նորաբակի մ/դ, Վաղաշենի մ/դ, Կարմիրգյուղի մանկապարտեզ
Արագածոտն	3	Օշականի մ/դ, Արագածի հ. 1 մ/դ, Աշտարակի հ. 3 հ/դ,
Սյունիք	6	Սյունիք գյուղի մ/դ, Գորիսի հ.1 ա/դ, Շվանիձորի մ/դ, Բարձրավանի մ/դ(2), Կապանի տարածաշրջանային քոլեջ
Վայոց ձոր	2	Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ ա/դ, Ելփինի մ/դ,
Շիրակ	12	Արթիկի հ. 6 հ/դ, Բյուրակնի մ/դ (2), Կապսի մ/դ, Գեղանիստի մ/դ, Գյումրու թիվ 3 հատուկ դպրոց, Գյումրու հ. 27 հ/դ, Գյումրու հ. 32 հ/դ, Գոգհովիտի մ/դ, Հոռոմի մ/դ, Ղազանչի մ/դ, Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ.

Ընդամենը	132	

Ամենամեծ թվով դիմումները Երևան քաղաքից են (թվով 113 դպրոցներից 47-ը Երևան քաղաքի դպրոցներ են՝ շուրջ 42%): Բողոքների թվով 2-րդ տեղում ՀՀ Արարատի և ՀՀ Շիրակի մարզերն են (հավասար)՝ 12-ական դիմում: Ամենաքիչ թվով դիմումները ՀՀ Վայոց ձորի մարզից են:



Ստորև ներկայացնում ենք Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների ենթակայության այն ուսումնական հաստատությունների տոկոսային թիվը, որոնց վերաբերյալ ստացվել են դիմում-բողոքներ.



Հաշվվել է Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների ենթակայության դպրոցների և դիմում-բողոքներ ստացված դպրոցների քանակական տվյալների կապի կորելյացիայի գործակիցը (ըստ մարզերի): Կապի աստիճանը բնութագրող կորելյացիայի գործակիցը ստացվել է 0.58, որը թերևս նշանակում է, որ նշված երկու բնութագրիչները այնքան էլ փոխկապակցված չեն: Իրոք. ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության թվով 149 դպրոցներից դիմում բողոքներ են ստացվել 3-ի վերաբերյալ, մինչդեռ ՀՀ Արարատի մարզպետարանի ենթակայության թվով 112 դպրոցների դեպքում դիմում-բողոք ստացված դպրոցների թիվը 10 է:





Դիմումներում բարձրացված հարցերն ըստ մարզերի և Երևան քաղաքի ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Դիմումներում բարձրացված (նշված) հարցերը	ԵՐԵՎԱՆ	ԱՐԱՊԿՈՏՆ	ԱՐԱՐԱՏ	ԱՐՄԱՎԻՐ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ԼՈՌԻ	ԿՈՏԱՅՔ	ՇԻՐԱԿ	ՍՅՈՒՆԻՔ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՏԱՎՈՒՇ	Ընդամենը
Գործատու–աշխատող հարաբերություններ	14	1	1		4	1	1	3	3		1	29
Տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններ, վատ, անարդյունավետ աշխատանք	25	1	6	9	6	4	1	12	5	1	3	73
Աշխատանքի վերականգնվելու հարց	3								1			4
Դպրոցի վերանորոգման հարց	1			1		1		2	1			6
Դպրոցում տիրող անառողջ մթնոլորտ	17		5	6	2	4		3	2		2	41
Տնօրենի դիպլոմի իսկության կասկած					2							2
Բողոք դպրոցի ուսուցչի դեմ	6	1		2			3			1	1	14
Վարչական աշխատանք ստանաու հարց	2							1				3
Աշխատանքից ազատելու հարց	3				1				1			5
Երեխայի տնային ուսուցման կազմակերպան մասին							1					1
Աշխատանքի ընդունվելու հարց						1	1		1			3
Սովորողի դպրոց ընդունվելու հարց	1											1
Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ	4		1									5
Դրամահավաքություն /դպրոցում, մանկապարտեզում/ քոլեջում	27	1	2	6	4	4		5		1		50
Դպրոցում որոշ աշակերտների հետ իրականացվել է վճարովի արտաժամյա պարապմունք	1											1
Տնօրենի կողմից աշխատողին կարգապայական տույժի ենթարկելը	3		1		1				1			6
Դժգոհություն դասաժամերով ապահովվածության վերաբերյալ	2		1		1	1		1	1		2	9
Ուսուցչի թափուր պաշտոնի համար կայացած մրցույթի բողոքարկում	1		1			1	1	2	1			7
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հարց	1										1	2
Տնօրենի պաշտոնավարման հարց	1				2				1		3	7
Մանկապարտեզում պարապմունքների, միջոցառումների կազմակերպման և անցկացման	2											2

խնդիր												
Երեխայի նկատմամբ հոգեբանական ճնշման գործադրում	11		2				1				1	15
Տնօրենի՝ նույն դպրոցում աշխատող հարազատների վերաբերյալ	3				1	1		2	1			8
Աշխատավարձի ոչ լրիվ վճարում տնօրենի կողմից	1			1				1	1			4
Տնօրենի կողմից կադրերի ոչ ճիշտ ընտրություն	3	1	2		2	1		2	2	1		14
Դպրոցի զինղեկի վատ աշխատանք					1							1
Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացման հարց	1							1				2
Քննությունների կազմակերպման վերաբերյալ	11		2	1							1	15
Դասագրքերի վարձավճարների վերաբերյալ								1				1
Տնօրենի կամ հավակնորդի՝ օրենսդրության խախտումով հավաստագիր ստանալու խնդիր									1			1
Դպրոցի կառավարման խորհրդի անդամների և գործունեության խնդիր	2											2
Դպրոցի մանկավարժական խորհրդի անդամների և գործունեության խնդիր	1							1				2
Դպրոցի ծնողական խորհրդի անդամների և գործունեության խնդիր	2											2
Ուսուցիչների իրավունքների ոտնահարման խնդիր	5	1	2	1	1	1		2	2			15
Ուսուցիչ-սովորող փոխհարաբերություններ	6		2	1			1					10
Մանկապարտեզում տնօրենի խախտումով նշանակում					1						1	2
Տնօրենի նշանակելու սահմանված ընթացակարգերի խախտման մասին	1								1		1	3
Հաճախումների, գնահատման հետ կապված խնդիր	1			2	2			1			2	8
Տեսչական մարմնի գործողությունների վերաբերյալ	2											2
ՔԾ մրցույթի կազմակերպման վերաբերյալ	1											1
Ընդամենը	165	6	28	30	31	20	10	40	26	4	19	379

Դիմումները հիմնականում վերաբերում են ուսումնական հաստատություններում իրականացվող դրամահավաքությանը, գործատու-աշխատող փոխհարաբերություններին, դպրոցում տիրող անառողջ մթնոլորտին:

Դիմում-բողոքներում առավել շատ բարձրացված հարցերն ըստ քանակի և %-ային համամասնության

- Ուսուցչի թավիրը պաշտոնի համար կայացած մրցույթի բողոքարկում (7)
- Տնօրենի պաշտոնավարման հարց (7)
- Տնօրենի՝ նույն դպրոցում աշխատող հարազատների վերաբերյալ (8)
- Հաճախումների, գնահատման հետ կապված խնդիր (8)
- Դժգոհություն դասաժամերով ապահովվածության մասին (9)
- Ուսուցիչ-ծնող վիճահարաբերություններ (10)
- Բողոք դպրոցի ուսուցչի դեմ (14)
- Տնօրենի կողմից կադրերի ոչ ճիշտ ընտրություն (14)
- Երեխայի նկատմամբ հոգեբանական ճնշման գործադրում (15)
- Քննությունների կազմակերպման վերաբերյալ (15)
- Ուսուցիչների իրավունքների ոտնահարման խնդիր (15)
- Գործատու–աշխատող հարաբերություններ (29)
- Դպրոցում տիրող անառողջ մթնոլորտ (41)
- Դրամահավաքություն (50)
- Տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններ, վատ, անարդյունավետ աշխատանք (73)



Դրամահավաքությանը վերաբերող հարց է բարձրացվում դիմումներից 50-ում, որը կազմում է ընդհանուր դիմումների 38%-ը: Դրամահավաքությանը վերաբերող դիմումներից 27-ը Երևան քաղաքից են (դրամահավաքությանը վերաբերող դիմումների գրեթե 50%-ը): Ինչպես նկատում ենք ստորև բերված գծապատկերից՝ այս հարցին վերաբերող դիմումների քանակը առավել շատ է մայիս ամսին (մայիս ամսին ստացված 49 դիմումներից 24-ը): Տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին են անդրադարձել 132 դիմումներից 73-ում (55%): Այս դեպքում ևս գերակշռողը Երևանն է (73-ից 25-ը՝ 34%): Այս հարցը բարձրացված է Երևան քաղաքից ստացված 57 դիմումներից 25-ում: Մայիս ամսից դրամահավաքին վերաբերող դիմումների գերակշռող մասը վերահասցեագրվել է ՀՀ ոստիկանության տարբեր վարչություններ: ԿՏՄ-ում սկսել է ստացվել ՀՀ ոստիկանության տարբեր վարչություններից գրություններ (թվով 4): Դրանցից երեքում նշված է, որ վարույթը կարճվել է հանցակազմ չլինելու պատճառով:



Հաշվվել է դրամահավաքությանը և տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին վերաբերող հարցերի քանակական տվյալների կապի կորելյացիայի գործակիցը (ըստ մարզերի): Կապի աստիճանը բնութագրող կորելյացիայի գործակիցը ստացվել է 0.9, որը թերևս նշանակում է, որ նշված երկու հարցերը փոխկապակցված են:



2017թ. նույն ժամանակահատվածում ՀՀ կրթության պետական տեսչությունը ստացել է թվով 80 դիմում բողոքներ: Բողոքներից 32-ը ստացվել են Երևան քաղաքից (40%) և ընդամենը 1 դիմում՝ ՀՀ Վայոց ձորի մարզից: Բողոքներում բարձրացված հարցերը գրեթե նույնաբովանդակ են ինչ 2018-ին: Դրամահավաքությանն են վերաբերել դիմումներից 35-ը (44%), Երևան քաղաքի դպրոցներին վերաբերել են 23-ը (դրամահավաքությանը վերաբերող դիմումների 68%-ը), տնօրենի կողմից թույլ տրվող անօրինականություններին են անդրադարձել դիմումներից 21-ում:

2018 թվականին իրականացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում.

ա) կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել ՀՀ թվով 22 ուսումնական հաստատություններում (Երևանի հ.հ. 14 հատուկ, 35, 51, 85 հիմնական, 101 միջնակարգ դպրոցներ, 114, 120 մանկապարտեզներ, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի հ. 4 հիմնական, Դալարի, Եղեգնավանի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Արմավիրի մարզի հ. 10 հիմնական, Շահումյանի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի հ. 1 հիմնական դպրոց, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի մանկապարտեզ, ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի, Բյուրակնի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի հ. 3, Հրազդանի հ. 12 հիմնական դպրոցներ, ՀՀ Սյունիքի մարզի Բարձրավանի, Շվանիձորի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Տավուշի մարզի Ոսկևանի մանկապարտեզ): Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են լիազոր մարմինների ղեկավարներին՝ քննարկելու, հայտնաբերված խախտումների

հետևանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, արդյունքների մասին ԿՏՄ տեղեկացնելու առաջարկով: Պատասխան գրություններ են ստացվել Երևանի քաղաքապետից, ՀՀ Արմավիրի մարզպետից:

բ) թվով 11 ուսումնական հաստատություններ ներառվել են ԿՏՄ 2018 թվականի ստուգումների ժամանակացույցում (Երևանի հ. 13 հատուկ, 55 հիմնական, 101 միջնակարգ, ՀՀ Արարատի մարզի Սիսավանի միջնակարգ դպրոցներ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի մանկապարտեզ, Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական, Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի, Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2, ՀՀ Շիրակի մարզի Շիրակի տարածաշրջանային, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, Նոյեմբերյանի պետական քոլեջներ):

գ) վերագործարկվել է ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղի մանկապարտեզը, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի հ. 10 հիմնական և Շահումյանի միջնակարգ դպրոցների տնօրենները նախազգուշացվել են, ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոցի տնօրենը ստացել է կարգապահական տույժ «նկատողություն», ՀՀ Արարատի մարզի Եղեգնավանի միջնակարգ դպրոցի տնօրենը ստացել է կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», Երևանի հ. 120 մանկապարտեզի և ՀՀ Արարատի մարզի Դալարի միջնակարգ դպրոցի, Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական պետական քոլեջի տնօրենները, նույն քոլեջի ուսումնական գծով փոխտնօրենը ազատվել են զբաղեցված պաշտոնից:

դ) հավաքագրված այլ տեղեկատվությունը ներկայացնում ենք ստորև բերված աղյուսակում.

Այլ տվյալներ՝	
Դիմողը չի հայտնաբերվել	17
Դիմողը բավարարվել է դիմումի նախնական վարույթից, և դիմումին ընթացք չի տրվել	18
Դիմողին ուղարկվել է պատասխան գրություն	56
Դիմումում նշված փաստարկները մասամբ են համապատասխանում իրականությանը	27
Դիմումում նշված փաստարկները չեն համապատասխանում իրականությանը	7
Դիմումն անստորագիր է	16
Դիմումում բարձրացված հարցերը դուրս են ՀՀ ԿՏՄ լիազորությունների շրջանակներից	34
Դիմումում բարձրացված հարցերը մասամբ դուրս են ՀՀ ԿՏՄ լիազորությունների շրջանակներից	8
Դիմումի վերահասցեագրում այ մարմիններ	6
Դիմումի վերահասցեագրում քաղաքապետարան	7
Դիմումի վերահասցեագրում ոստիկանություն	27
Դիմումի վերահասցեագրում մարզպետարան	9
Կարճված դիմում	39
Մասամբ կարճված դիմում	4

ՌԳՍՊՎԳ վարչություն